





ԳԱՐԵԳԻՆ Հ. ՌՈՒՇՏՈՒՆԻՆ

493

ՎԵՅ ՈՒ ԿԵՍ ՊՈՐՏԻ

ԺԱՌԱՆԳ ՄՆԱՑԱԾ

ՍՆՏՈՒԿԸ

Կատակախաղ մեկ արար

(Գ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

Հայուսակուրին Հ. ԿՕՃԻԱ. ԲԵՐԵ

Ա. Բ. Ե. Ի.

Պատր Ալի, Բեհք Էջ. խան
Ա. ՊՈԼԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Բ. Ե. Ի.

B. P. 558
S T A M B O U L

1928

891.881

493

ԳԱՐԵԳԻՆ Հ. ԲՈՒՇՏՈՒՆԻՆԻ

891.99

Դ.

ՎԵՅ ՈՒ ԿԵՍ ՊՈՐՏԻ

ԺԱՌԱՆԳ ՄՆԱՑԱԾ

Aia
57/44

ՍՆՏՈՒԿԸ

Կատակալի մեկ առար



(Գ. ՏՊԱԳՐՈՒԹՅԻՒՆ)

Հայաստակաքարին Հ. ԿՕՉԱՐԵՆՔ

Ա. Բ Ե Խ ՏՊԱԳՐՈՒԹՅԻՒՆ

Պապը Ավի, Ռէժիս Էմ. խան
Կ. ՊՈԼԻՏՈ

B. P. 558
STAMBOUL



1928

ՎԵՅ ՍԻ ԿԵՍ ՊՈՐՏԻ

ԺԱՌԱՆԳ ՄՆԱՑԱԾ ՍՆՏՈՒԿԸ

ԱՆՁԻՆՔ

ԼՈՒՍԻԱ

ՅԱԿՈԲ

ԿԱՐԱՊԵՏ

ՊԵՏՐՈՍ

ՄԱՆՈՒԵԼ

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ Ապուտ դեղագործ մը

ԴՐԻԿՈՍ Վեց ու կես պորտին ժառանգորդ մը

ՆՇԱՆ Դրացի

ՏԻՏՈՍ

ԺԱռանգորդներուն բնակարանը

(Տեսարանն է ժառանգորդներուն բնակարանը)

Տեսարանն է սենեակ մը. խորք դուռ մը. ազ
կողմը քովի քով երկու սենեակներու դռներ,
որոնց մին Լուսիախն սենեակը կը տանի
եւ երկրորդը՝ սենուկին սենեակը:

ՏԵՌԻԼ Ա.

ԼՈՒՍԻԱ. Առանձին (Ներսին խառն ձայներ)

Ահաւասիկ լուսցեր է... թարեկենդանի առթիւ
դիմակաւորներու խառնիճաղանձ ձայները կը լըս-
ուին... ամենքը զուարթ, կ'երգեն, կը նուազեն, կը
պարեն. մինակ ես տիսուր եմ... ես, ո՞հ Աստուած
իմ. ո՞չափ գժրախտ եմ. եթէ լուսահոզի մայրիկս
ողջ ըլլար՝ հիմա ի՞նչ ցնծութեամբ սա պատուհանին
առջեւ նստած, պիտի զուարձանայի... սակայն ա-
ւա՞զ, այս հրճուալից երգերը զի՞ս կը տաղտկացնեն...
կ'ուզեմ առանձին մնալ... ձայն մը չլսել... ողբար,
հեծել, հառաչել: (Պատուհանը կը գոցէ. այն ատեն
ձայները պետք է դադրին.) Աւասիկ այսպէս իմ ու-
րախութիւնս՝ արտմութիւն է, հառաչանքս՝ երջան-
կութիւն և ժպիտս՝ արտասուք...: Մայր իմ, սիրեց-
եալ մայրիկ, շատ կանուխ ձգեցիր քու տառապեալ
աղջիկդ այսպէս մատաղ հասակի մէջ. ան իր աղքա-
տութեան պատճառաւ աշխարհի բամբասանքին են-
թակայ պիտի ըլլայ: (Ողբալով) Աւա՞զ, այս աշխար-
հիս երջանկութիւնը մի միայն սիրամոլ կիները կը
վայելին, վասն զի պաշտպան ունին, ոսկի ունին.

իսկ ես ի՞նչ ունիմ. աւասիկ բոլոր ունեցածս, և զոյդ մը գուլպայ լուսահոգի հօրս սնտուկին մէջ... Ո՞վ ունիմ, չորս գատարկապորտ, ծոյլ և անհոգ եղաքայրներ որոնք հազիւ հազ կրնան ինքզինքնին կառավարել... երկու օրէ ի վեր, անօթի, ծարաւ եմ ու ոչ մէկը կուգայ իմ վիճակս հարցնելու. առանձին, որբ, ո՞հ, ո՞չչափ գժբախտութիւն է եղեր մայր կամ բարի ազգական մը չունենալը...: Չեմ ուզեր վիճակս դրացիս յայտնել, վախնալով թէ իրենց արհամարտանքին նշաւակ կ'ըլլամ, բայց անոնք զիտեն իմ վիճակս, վասն զի պարտատէրները ամէն օր տանը դուռը ձեռք կ'առնեն և սոսկալի հայնոյութեամբ առնելիքնին կը պահանջեն... երկու օրէ ի վեր անօթի մնացող որբէ մը ստակ կը պահանջեն, կը կարծեն որ մայրս ժառանդ թողած ըլլայ. ահա այսօր ալ դեղագործը պիտի գայ, ի՞նչպէս պիտի երեւամ իրեն, ի՞նչ պիտի պատասխանեմ... Աստուած իմ, դուն եղիր իմ ապաւէւս: (Տիտուր, կը բառուի սենեակը)

S b U h l. β.

Հ Ա Մ Բ Ա Ր Զ Ո Ւ Մ

ՀԱՄ. (Կը մտնի, բալրօին ծայրը պատռած) — Գետինն անցնի սա Բարեկենդանն ալ ու գետինն անցնելիք սրիկաներն ալ: Էօ՛ֆ, հազիւ կրցայ ինքզինքս ներս նետել, թշուառականներ, ի՞նչ կ'ուզէք... դուք խիպ ամօթ չունիք, (պատռիանը երպալով) Կոյր էք, է՞շ էք, ի՞նչո՞ւ աղնուական մարդը հասարա կէն չէք զանազաներ... զիս ո՞վ զիտցաք, ես այօրուան օրս տիրլումայով դեղագործ եմ. անպատիւներ, գոնէ մարդը չէք ճանչնար նէ՛ հագուստին, քալուածքին նայեցէք: (Ներսին միաս խնդալու եւ եկանին Ֆիտենկի ձալն) Այդ փամփուշտնիդ տարէք ձեր ձնողքին քիթին պայթեցուցէք որ կրթած տղաք-

նուն վարպետութիւնները տեսնելով ուրախանան: (Դառնալով) Ո՞հ, ճամբուս վրայ ի՞նչպէս ալ շարեր են այդ փամփուշտները որ չեմ իմացած... քայլ մը կ'առնես, պա՛մ... բան չունիս նէ ցատկէ, գետինն անցնելիքները տակէս բռնկցուցերեն... պա՛մ, պում, չա՛թ, տա՛ն տուն... կը՛ո, բո՛ւմ, ֆէ՛ս... ֆըսերնիդ ալ գետինն անցնի... բումբերնիդ ալ...: Խենթենալս բան մը չէ՛ր... զիս այս վիճակը ձգեցին... մարդկութենէ հանեցին... գոնէ այսօր նոր լաթերս հազած չըլլայի՝ վնաս չունէր... հիմա ես լուսիաին ի՞նչպէս պիտի երեւամ, ի՞նչ պիտի պատասխանեմ, լա՛կոտներ... եկէք հիմա սիրուհիս խօսք հասկուցէք նայիմ. զիս տգեղնելու օ՞րը դառք. (Ներսին կը խնդան) սա լակոտին նայէ, ես կուգամ կ'ըսէ... ծօ՛, դուն չե՞ս ամէնար, բարկութենէս չե՞ս վախնար... հիմա վար իջնելով գլուխդ ոտքիս տակ ճզմե՞մ (մեկուսի) բերան է հա՛, վար իջնեմ նէ՛ բզիկս կը հանեն... էօ՛ֆ... վերջապէս զացին, հիմա զեղնցանալու մէկ ձարը... սա սենեակը կա՞յ արդեօք. մէջ մը նայինք (կը մտնէ):

S b U h l. գ.

Լ Ո Ւ Ս Ի Ա

ԼՈՒՍ. (Գալով) — Զայն մը առի... ո՞վ կրնայ ըլլալ արդեօք... մարդ չկայ. (Սենեակին մէջ ոտքի ձալն) Տէր Աստուած, սենե սկին մէջ ոտքի ձայներ կան. ո՞հ, եղբայրներս ալ հոս չեն, ի՞սչ ընեմ, ո՞ւր երթամ, սենեակս քաշուիմ և սիզը դնելով՝ ի՞նքինք Աստուածոյ յանձնեմ: (Կ'երբայ):

S b U h l. դ.

Հ Ա Մ Բ Ա Ր Զ Ո Ւ Մ

ՀԱՄ. (Գալով) — Ահաւասիկ սենեակ մը՝ որ պարապ սնտուկէ մը զատ ուրիշ բան չկայ մէջը...:

աւելի աղէկ, կ'երեւայ թէ սիրուհիս խիստ աղքատ է և իր պարտքը չպիտի կրնայ վճարել, որով ուզէ չուզէ, ինծի հետ կարգուելու յանձնառու պիտի ըւրայ... ալ ի՞նչ ընեմ, աս գեղեցկութիւնս ալ իրեն շատ է... ասկէց զատ, զիս կը սիրէ. այո՛, զօրաւոր փաստերով կրնամ ապացուցանել որ զիս կը սիրէ. առաջին փաստը սա է որ զինքը կը սիրեմ. երկրորդ փաստ է որ հարուստ և պատուաւոր եմ, հապա երրորդ փաստ ո՞րն է... ա՛յ թշուառական, մտքէս ելաւ, բայց ի՞նչ էր երրորդ փաստ... հա՛, գտայ, երրորդ փաստ ալ սա է որ իրեն հետ պիտի կարգուիմ. այո՛, երեք զօրաւոր փաստեր չե՞ն կրնար հաստատել որ Լուսիա զիս կը սիրէ: Ինչո՞ւ, որովենեան հարուստ եմ, երիտասարդ եմ, գեղեցիկ ալ եմ... ուրիշ ի՞նչ եմ... բան մըն ալ եմ, բայց միտքս չի գար... գիտեմ գիտեմ որ բան մըն ալ եմ, սաստիկ ազատամիտ եմ, սակայն չհասկցուի թէ նախանձու չեմ, պատիւը չճանչցող մըն եմ, ամէն բանէ առաջ պատիւ կը պահպանեմ. ապագաս կը հաշուեմ, ներկան կը համեմատեմ և անցեալն ալ անցած կը սեպեմ: Ա՛ն Լուսիա, դուն շատ բարի էրիկ մը պիտի ունենաս, քեզ սիրող ու զգուող. ես քեզի թէ՛ երիկ թէ հայր և թէ խնամակալ պիտի ըլլամ... եկուր «չէ՛» մի ըսեր, եթէ զիս մերժելու պատճառ մը ունիս՝ բացարձակ ըսէ՛, հոգ չէ. մի՛ քաշուիր, ես քեզ շատ կը սիրեմ, դուն ալ զիս, անանկ չէ՛, ա՛լ լնիցաւ, ահա համաձայնեցանք: Հիմա գանք ապրուստի խնդրին. զիտես որ պարաստ դրամ 200 ոսկի ունիմ, խանութի դրամագլուխս 70ը կ'անցնի. հիմա քանի՞ ըրաւ, 270 ոսկի, վաճառականին 50 ոսկի պարտական եմ, մնաց 220, ապարիկս ալ 85 ոսկիի կ'ելլէ՛ ունիմ 305 ոսկի, չօգտե՞ր, ինչո՞ւ չպիտի օգտէ, գեղեցկութիւնս ալ շատ չէ նէ՛ քիչ ալ չէ կարծեմ. հրամմէ, ասոր ըսելիք մը ունի՞ս, հարկաւ ո՛չ. Եյ, անզին ի՞նչ կը մնայ, ի՞նչ պիտի մնայ, բան մըն ալ չի մնար... ըսել

է որ համոզուեցար, ապրիս... խօսքերնիս լմնցածի պէս է...: Հիմա քիչ մըն ալ նշանտուքին և հարսնիքին խօսքը ընենք... մի՛ կարմրիր, սիրունիկս, ասոր առուտուր կ'ըսեն, մէկ վար մէկ վեր, կը լմնցնենք: Ի՞նչ նշան տամ. օ՞ղ, մատնի՞ թէ պոշ. ինծի հարցնես նէ՛ պոչը զէշ չերթար, մէշն ալ պատկերս կը դնեմ, կ'ուզես նէ, բայց ինչո՞ւ չպիտի ուզես, հիմակուան կանոնը աս է, գէշ կանոն չէ. կնիկները իրենց կորսուած էրիկնին ասանկով շուտ մը կը գըտնան. աս ալ ընդունեցիր. Եյ, աս մեր հարսնիքը ե՞րբ ընենք, նշանուած մնալը աղէկ բան չէ. զիտե՞ս ա՛, հիմակուան երիտասարդներուն դրամագլուխը 4 ամիս նշանուիլ և չորս ամսուան մէջ 5 տարուան տուկոսը առնել է: Մենք անանկ չընենք, մեզի չի վայեր. իրարու հաւնեցանք, հասկցանք մի՛ զլուի զլիսի տանք երթանք: Ապրիս; ասանկ կ'ուզեմ, մենէ երջանիկ էրիկ կնիկ չկայ. իրարմէ չենք ձանձարանար, 5 տարի ալ, 10 տարի ալ անցնի՛ ի՞նչ սիրավ սկսանք նէ՛ նոյն սիրով կը մնանք. զաւակներնիս ալ կը շատնան... մտածէ՛, ի՞նչ աստիճան հաւատարիմ ենք իրարու որ աղջիկներնիս քեզի կը նմանին, մանչերն ալ ինծի: Ուրիմ, քանի որ զէմքով մեզի կը նմանին՝ անուննին ալ մերինին նմանցնենք, երկու զաւակիս անունն ալ համբարձում է... չէ աս չեղաւ. Համբարձումը շատ խորթ կ'իյնայ, ամպարցուի պէս խօսք մը. եկուր ազւոր անուն մը դնենք. դուն դիր... ես չեմ զներ, բայց մեզի ի՞նչ, աս իրաւունքը կնքահօրն է, բայց զաւակներուս ես կը խառնուիմ, դուն քու աղջիկը կրթէ, մանչերուս մի՛ խառնուիր... Լուսիա, մի՛ խառնուիր կ'ըսեմ, կը հասկնա՞ս, չե՞ս հնազանցիր. կարծեմ թէ կրնակդ կը քերուի. գնա՞՛, կորսուէ՛, բարկացած եմ, շուտ սենեակդ մտիր, աշքս չտեսնայ: Ապրի՞ս, խօսքս բռնեցիր, հիմա աւելի պիտի սիրեմ քեզ: Եկուր նայիմ, հոս եկուր, վայ, խօսքս մտիկ չե՞ս ըներ, կը հրամա-

յեմ, ահա մէյ մըն ալ կ'ըսեմ (պօռալով) Լուսիա',
հոս եկո՛ւր:

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆ ԵՒ ԼՈՒՄԻԱ

ԼՈՒՄ. (Մտած ատենը մեկուսի) — Ո՞հ թշուառութեանս, գեղագործն է եղեր, (Բարձր) Հոս եմ, պարոն:

ՀԱՄ. — Երկու ժամ է, պօռալէն կոկորդս պատոցաւ, ասանկ պիտի ընսս նէ՝ ես աս առուտուրէն վազ կուգամ:

ԼՈՒՄ. — Ներեցէք, պարոն, տանը մէջ առանօձին ըլլալուս, վախէս սենեակս քաշուած էի, և մինչեւ որ ձեր ո՛վ ըլլալը չստուգեցի՝ չկրցայ դուրս ելլել:

ՀԱՄ. — Խօսք տո՛ւր որ ուրիշ անգամ զիս այսպէս չպիտի բարկացնես:

ԼՈՒՄ. — Զեմ հասկնար, պարոն, ե՞րբ ձեզ բարկացուցի:

ՀԱՄ. — Ի՞նչպէս չի բարկացուցիր, դուն մինակ քու աղջիկներուդ կը խառնուիս:

ԼՈՒՄ. (Մեկուսի) — Ի՞նչպէս աղջիկ, ի՞նչ ըսել կ'ուզէ:

ՀԱՄ. — Ես ալ քանի որ հայր եմ գտնուեր, իմ տղաքներուս կը խառնուիմ... պայմաննիս ալ ասանկ չէ՞ր:

ԼՈՒՄ. — Ի՞նչ կ'ըսէք, պարոն, ի՞նչպէս պայման:

ՀԱՄ. — Ի՞նչ պայման պիտի ըլլայ, քիչ մը առաջ խօսողը դուն չէի՞ր:

ԼՈՒՄ. — Ե՞ս:

ՀԱՄ. — Այո՛, դուն:

ԼՈՒՄ. — Բայց դուք հոս առանձին էիք, պարոն,

և ես ալ իմ սենեակս քաշուած էի:

ՀԱՄ. — Հա, իրաւ անանկ... (Մեկուսի) Վա՛յ

թշուառութեանս, ինելքս անանկ մը ցնորեր է որ...

(Բարձր) Ներեցէք որիորդ, առանց ձեզի հարցնելու.

Չորս դաւկի տէր եղեր էի:

ԼՈՒՄ. (Մեկուսի) — Գինո՞վ է, ի՞նչ է. մինակ ալ եմ;

ՀԱՄ. — Ինչ որ է, օրիորդ, նորէն կը սկսինք մեր առուտուրը:

ԼՈՒՄ. (Մեկուսի) — Առնելիքին համար ըլլալու է:

ՀԱՄ. — Մէկ վար մէկ վեր կը լմացնենք կ'երթայ:

ԼՈՒՄ. — Իրաւունք ունիք, պարոն, առնելիք: Նիդ է, կրնաք պահանջել:

ՀԱՄ. — Բայց շուտ մը պէտք է ընենք լմացնենք լուիս:

ՀԱՄ. — Աւա՛ղ պարոն, անկարելի է ատիկա: ՀԱՄ. — Ինչո՞ւ, իմ վրաս վատահութիւն չունենամ:

ԼՈՒՄ. — Ի՞նչ ըսել է, առնելիքի տէր ըլլալէ ետքը, ինչո՞ւ ձեր վրայ վատահութիւն չունենամ. մինակ սա կայ որ երկու օրէ ի վեր եղբայրներս տեսած չեմ:

ՀԱՄ. — Ատ ի՞նչ խօսք է. եղբայրներդ ի՞նչ կը խառնուին մեր գործին:

ԼՈՒՄ. — Քանի որ ես վճարելու անկարող եմ. բոլոր յօյսս անոնց վրայ է:

ՀԱՄ. — Բայց դուն ի՞նչ կ'ըսես կոր, ի՞նչպէս վճարում, ի՞նչպէս յօյս:

ԼՈՒՄ. — Միթէ ձեզի 700 դահեկան պարտք չունիք:

ՀԱՄ. — Հա՛, գեղերուն ստակը:

ԼՈՒՄ. — Հապա ձեր ըսածը ո՞րն է:

ՀԱՄ. — Իմ ըսածս... իմ ըսածս սա է որ, ես, ես քեզ... (Մեկուսի) Զէ, շատ առաջ երթալու չէ, (Բարձր) իմ ըսածս կամ ըսելիքս սա է որ...

ԼՈՒՄ. — Եթէ հաշիւնիդ կարգադրելէ ետքը առոնուած գեղեր կան, ատոր ըսելիք չունիմ:

ՀԱՄ. — Զէ՛, ատիկա չէ՛, ա՛խ, օրիորդ:

ԼՈՒՄ. — Ուրեմն ի՞նչ է:

ՀԱՄ. (Մեկուսի) — Ոչ, ընտո՞ր խօսք բա-

նամ, դժուարը առ է. (բարձր) իմ ըսելիքս սա է որ...
ԼՈՒ. — կ'աղախեմ, շուտ ըսէք:

ՀԱՄ. (Մեկուսի) — Ախ, սա իմ գետինն անցնես
միք բնաւորութեանս ի՞նչ ըսեմ, կնկան մը հետ միս
նակ մատցի՞ մի, ըսելիքս կը մոռնամ:

ԼՈՒ. — Արդեօք ցաւալի՞ բան մըն է ըսելիքս
նիդ որ այսափ կը քաշուիք:

ՀԱՄ. — Զէ, օրիորդ, չէ՛, ընդհակառակն՝ ուս
րախալի է, բայց սա կայ որ... ի՞նչպէս ըսնմ, ո՞ւրկէ
սկսիմ:

ԼՈՒ. — Ո՞չ, պարոն, կ'երեւի թէ դուք ինձմէ
բան կը պահէք. ի սէր Աստուծոյ կ'աղախեմ, ըսէ՛ք,
արդեօք գէշ բա՞ն մը պատահեցաւ,

ՀԱՄ. — Պատահեցա՞ւ, այո՛, գետինն անցնելիք
թշուառականները...,

ԼՈՒ. — Եղբայրներուս համա՞ր կ'ըսէք:

ՀԱՄ. — Զէ՛, սա Բարեկենդանի իններուն հա-
մար կ'ըսնմ որոնք քիչ մնաց զիս պիտի խենթեցնէին:

ԼՈՒ. — Բայց ես եղբայրներս կը հարցնեմ:

ՀԱՄ. — Թող տուր, հոգիդ կը սիրես. անոնք ալ
իշու պէս գինեառունը նստեր, փողոցի տղոթ ինծի ը-
րածնուն վրայ քա՞ն քա՞ն կը խնդան կոր:

ԼՈՒ. — Գիտեմ, չորսն ալ անհոգ մարդիկ են.
զիս այսպէս մինակ երեսի վրայ ձգած՝ իրենց ուրա-
խութեանը կը նային:

ՀԱՄ. — Բայց վերջապէս ի՞նչ կրցան ընել ինծի,
քիչ մը տգեղցուցին. այսափ, ասիկա քեզի վետո մը
չունի՛ եա:

ԼՈՒ. — Ի՞նչ կրնամ ըսել, պա՛րոն:

ՀԱՄ. — Հիմա բաւական է որ դուք զիս կը
սի... (չէ, դեռ ատենը չէ.) բայց օրիորդ, ի՞նչո՞ւ կե-
ցեր էք... նստինք նէ՝ զէշ չըլլար:

ԼՈՒ. — Դուք ձեր հանգիստը նայեցէք, պա-
րոն:

ՀԱՄ. — Ի՞նչ ըսել է, նստեցէ՛ք. ասանկ փափուկ

ինդիր մը ոտքի վրայ կեցած՝ չենք կրնար լմցնել:

ԼՈՒ. — Բայց, պարոն, ներեցէք որ ձեզի ըսեմ
թէ տանը մէջ մինակ եմ. հետեւարար դրացիները ձեր
հոս մտնելը տեսնելով, զիս չարաչար կը բամբասեն:

ՀԱՄ. — Ա՛, այդ մասին անհոգ եղէք, եթէ իմ
դիտաւորութիւնս ձեզի իմացնեմ, դուք պիտի ստիպէք
որ նստիմ:

ԼՈՒ. — Ինչ որ ալ ըլլայ ձեր դիտաւորութիւնը,
պարոն, թէ բարի և թէ չար՝ չեմ կրնար բան մը
ընել, մինչեւ որ եղբայրներս չտեսնեմ:

ՀԱՄ. — Սակայն իմ դիտաւորութիւնս եղբայր-
ներուդ չի վերաբերի, մինակ քեզի համար է:

ԼՈՒ. — Ի՞նչ կրնայ ըլլալ ուրեմն, ըսէ՛ք:

ՀԱՄ. — Բանը ատ ըսելն է:

ԼՈՒ. — Ինծի՞ կը վերաբերի:

ՀԱՄ. — Հապա՞մ. մի միայն քեզի, մի միայն
իմ... (Մեկուսի) եկուր ըսէ՛ նայինք:

ԼՈՒ. — Զարմանալի բան, ի՞նչ կ'ըլլաք:

ՀԱՄ. — Ի՞նչ ըլլալս կը հարցնես... շատ բաներ
կ'ըլլամ կոր... շատ բաներ... բայց ըսուելու բաներ
չեն որ, ասոր հետ մեկտեղ չպիտի ըսնմ չէ՛, մինակ,
ատենին կը սպասեմ կոր:

ԼՈՒ. (Մեկուսի) Ի՞նչ ըսել կ'ուզէ:

ՀԱՄ. — Սակայն, կեցի՛ր, ի՞նչ ըսելիքս դուն
աղէկ գիտես. գոնէ դուն սկսէ որ մնացածն ալ ես
ըսեմ լմնայ:

ԼՈՒ. — Եթէ ստակին համար է...

ՀԱՄ. — Հիմա թող այդ ստակին խօսքը, ետքը
կը խօսինք, միւսին նայինք:

ԼՈՒ. — Ո՞ր միւսը:

ՀԱՄ. — Միւսը... բուն խնդիրը:

ԼՈՒ. — Ուրիշ ի՞նչ խնդիր կայ որ...

ՀԱՄ. — Ախ, կուսիա, դուն աղէկ պիտես որ
ես քեզ...

ԼՈՒ. — Եյ...

ՀԱՄ. — Ե՛յ, Ե՛յ, ԿԹէ ինծի չօգնես՝ ի՞նչպէս ըսեմ:
ԼՈՒ. — ԼՖԱԳՈՆՔ....

ՀԱՄ. — Կը....

ԼՈՒ. — Կը....

ՀԱՄ. — (Թշուառական բառ, կարծես թէ ներսէս կը քաշեն կոր... օ՞ն համարձակութիւն. երկու վանկ մնաց...) կը....

ԼՈՒ. — Կը բանտարկուի՞ք, ըսել կ'ուղէք:

ՀԱՄ. — Ա՛խ, չէ՛ չէ՛... ատ չէ՛:

ԼՈՒ. — Հապա ի՞նչ է:

ՀԱՄ. — Մտքինս է, մտքինս:

ԼՈՒ. — Մտքինդ ի՞նչ է:

ՀԱՄ. — Երկու վանկով բառ մը, կը սի... (համբարձում քեզ տեսնեմ):

ԼՈՒ. — (Մեկուսի) Հիմա՝ կը հասկնամ իր միտքը:

ՀԱՄ. — Կ'ըսեն թէ երբ որ մարդ մէկու մը առաջարկութիւն մը ընելէ կը քաշուի, թող էն մինչեւ 10 համրէ և 10երորդին բոլոր ուժը ժողվելով ըսելիքը ըսէ:

ԼՈՒ. — Զպիտի՞ ըսէք, պարոն:

ՀԱՄ. — Կեցէք, օրիորդ... հիմա, (խերն անիծեմ, կ'ըսեմ կ'երթայ) 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, տա... ը՛ըհ, պիտի ըլլայ, բայց ասանկով գործ չի լինար... ի՞նչ պիտի ըլլայ... ա՛լ աս անդամ պիտի ըսեմ... օրիորդ ես քեզ կը սի... 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, (Դուրսէն ոսքի ձայներ):

ԼՈՒ. — Ա՛հ, Տէր Աստուած, ոտքի ձայներ կան... հիմա ի՞նչ պիտի ընենք, պարոն:

ՀԱՄ. — 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, (Դուրսէն լալու ձայնի):

ԼՈՒ. — Օ՞ն օ՞ն, շուտ... գուրս ելէք... եղբօրս ձայնն է... եթէ ինծի հետ առանձին տեսնէ քեզ (ներսէն միտ լալու ձայնի):

ՀԱՄ. — Սակայն օրիորդ, ես քեզ կը... կը...

ԼՈՒ. — Կ'աղաջնմ...

ՀԱՄ. — Բայց ես...

ԼՈՒ. — Մեր երկուքին մահուանը պատճա՞ռ ըլլալ կ'ուզես, չո՛ւտ, սա սենեակը մտի՛ր ու պատեն առիթ մը գտնելով՝ ինքզինքդ գոնէն դուրս նետէ: (Համբարձում կը սի... կը սի... ըսելով կ'երբայ սենեակը):

ՏԵՍԻ Հ.

ԼՈՒ. և ՅԱԿՈԲ, (որ զինովի ու լալով կը մտնէ)

ՅԱԿ. — Ա՛հ, հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ... խեղճ մայրիւ կը... որչափ լամ՝ տեղն է, ա՛հ, հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ:

ԼՈՒ. — Յակոբ, միսիթարուէ, սիրելի եղբայրս, լալէն ի՞նչ օգուտ, Աստուծոյ կամքը առ է եղեր:

ՅԱԿ. — Ի՞նչպէս չլամ, ա՛խ, լուսահոգիին մեռնելին ի վեր բերնի համով զինի մը խմած չունիմ. ստակ չունենալուս համար՝ խանութին մէջ որչափ զէշ խմելիքներ կայ նէ՝ զինեպանը ինծի կը քէ կոր:

ԼՈՒ. — Հիմա պէտք է որ մենք մեր տանը գործերը կարգադրենք... ասանկով մեր վիճակը ի՞նչ պիտի բլլայ:

ՅԱԿ. — Առաջ ստակը ձեռքս՝ ուզած տակառէս քաշել կուտայի, խեղճ մայրիկս մեռաւ, ստակս ալ հատաւ, բերնիս համն ալ փախաւ... Լուսիա՛, դուն կղիր իմ տեղս ու մի՛ լար նայիմ:

ԼՈՒ. — Ա՛հ, Յակոբ, ես քենէ աւելի մեծ պատճաներ ունիմ լալու, երկու օրէ ի վեր անօթի ծարաւ, պարտատէրներուն հայոսութիւնները մտիկ ընելու դատապարտուած եմ, այսօր ալ դեղագործը եկաւ, իրեն 270 զրուշ պարտք ունինք:

ՅԱԿ. — 270 զրուշ, ամէնը այդչափ է... ինչ որ է, մէկ ամսուան մէջ առնուած գեղերու համար 270 զրուշը շատ չէ, սակայն բանը վճարելն է. ես կուտ մը չունիմ... գործ ալ չունիմ:

ՀՈՒՍ. — Ուրեմն ի՞նչ պիտի ընենք, առնելիքին
տէրը խօսք չի համար, պիտի պոռայ կանչէ:

ՅԱԿ. — Ինչո՞ւ պիտի պոռայ... թող առնելիքը
առնէ:

ՀՈՒՍ. — Ազէկ, բայց ե՞րբ պիտի վճարուի:

ՅԱԿ. — Ե՞րբը ինչ պիտի ընէ, առնելիքին
մինակ խօսքը կ'անցնի:

ՀՈՒՍ. — Այսօր չվճարուի նէ՝ շատ բաներ կրնայ
ընել մեղի:

ՅԱԿ. — Կ'ընէ ա՛:

ՀՈՒՍ. — Զըլլայ' որ գուրս ելլիս, գան նէ՝ դուն
խօսք հասկցուր. ես իրենց երեւնալու կ'ամցնամ.

ՅԱԿ. — Ե՛յ, դուն գործիդ զնա՛, եկողին ես խօսք
կը հասկցնեմ:

ՀՈՒՍ. (Մեկուսի) — Թող գեղագործն ալ հիմա
առնելիքը պահունջէ (սենեալի կ'երալ):

Տ Ե Ս Ի Լ Ի Բ.

ՅԱԿ ՈԲ մինակ

ՅԱԿ. — (Կը նսի եւ գրավանեն զինիի շիւ մը
հանելով) Ե՛լ նայինք, գործը քեղի մնաց. առնելիքը
ներուն պատասխանատուն ալ դուն ես՝ վճարողն ալ,
ինձի լոյս և խորհուրդ տուր. (Կը խմէ) Ի՞նչ սքանչելի
զինի... է՛ն, աշխարհք առանկ է... ամէն բան մը-
տածես նէ՝ չի գար ելլեր... 270 զրուշ պարտք ունինք,
հարկաւ օր մը կը վճարենք. (Կը խմէ) այսօրպիտի վը-
ճարուի եղեր, ուսկի՞ց, ո՞ր կողմէն ստակ պիտի գայ,
մէյ մը տեսրակը նայինք. (Գրպանեն տեսրակ մը կը հանէ)
գուցէ, չիտեմ ա՛, տեղէ մը առնելիք ունեցած ու
մոռցած կ'ըլլամ, (Կարդալով) եօրկին 26, աս պարտք
է. Զաքարին 7, աս ալ պարտք. Մարկոսին՝ աս վը-
ճարուած ըսել է, տուած ածուխին կէսէն աւելին քար
էր. վարը զրած է, թող գայ ետ առնէ... աս ի՞նչ է,
104, մեծկակ բան մըն է հա՛, ննջեցնալի թաղման

ծախքը, աս պարտքը աղջին կ'իմայ. աս ի՞նչ է, Տի-
միթրի 33, գնա բանդ, ստակ մը չեմ տար, տուած
գինիդ քացախի պէս բան մըն էր... ուրիշ, ուրիշ,
ի՞նչ ըսել է, այսափ պարտք ունեցողը առնելիք չը-
պիտի՞ ունենայ... մոռցած չըլլամ գրելու... կրնայ
ըլլալ... մտածելու է... զարմանալի՛ բան, մոռցեր
եմ. այսօր գեղագործը ստակ կ'ուզէ, վճարելու է, բայց
ինչո՞վ... հա՛, գտայ, խելքս ո՞ւր է գացեր, լուսա-
հոգի մայրիկս սնտուկ մը ձգած է, հարկաւ մէջը շատ
մը թանկացին բաներ ըլլալու են. այս՛, այս՛, կօծի
կուկ մըն էր, գուցէ մէջը տոպրակով ստակ պահած
ըլլայ. կասկածո աւելլորդ է, մարդ վրայ չեկած սա
սնտուկին հետ առանձին տեսութիւն մը ընեմ. բայց
եթէ միւս եղբայրներս վրայ գա՞ն, է՛հ, հոգս, կ'ըսեմ
թէ մօրս սնտուկը Կարօտցեր էի տեսնելու գացի, իսկ
եթէ կղպուած է, է՛հ, անպատճառ բանալու եմ...
Օ՞ն ուրեմն, քաջալերութիւն, գեղագործը ստակը
առու, ա՛լ պարտքէ պատանցանք: (Գլուհելով սենեա-
լի երալու միջոցին նետեւեալլ կ'երգի).

Երկու հարիւր հօրանասուն

Կրուց պարտէն ի՞նչ կ'ելլայ,

Վաղն առաւօս քող զայ մուրուն,

Առնելիին առնէ երալ:

Կեցգէ զինին ու զինեպան, որ մեր միտքը կը բանան,
Կեցցեն ապրին ասանկ մայրեր որ մեզ ժառանգ կը ձգեն:

Տ Ե Ս Ի Լ Ի Բ.

ԿԱՐԱՊԵՅ (ԿԵՄԲ) ՅԱԿՈԲ

ԿԱԲ. — Մարդ չկայ... առիթը ձեռքէ չփախց.
Նենք, աս սնտուկին հետ առանձին տեսութիւն ընե-
լու յարմար ատենը հիմա է, եթէ այսօր կալօն մը
օղիին ստակը չվճարեմ, յաւիտեանս յաւիտենից բերա-
նըս օղի մտնելիք չունի. օ՞ն, աճապարենք, Լուսիան

քնացած ըլլալու է, բայց եթէ արթուն է՛. կեցիր,
անդամ մը փորձենք, ա՛հ, հի՛ւ, խեղճ մայրիկս, ա՛խ,
վա՛խ, հի՛ւ:

ՅԱԿ. — (Գոնեն, մեկուսի) — Վա՛յ, թշուառական,
տեսա՞ր մի հիմա բռնուեցանք:

ԿԱՐ. — Ա՛հ, հի՛ւ, հի՛ւ. (Հորս կողմբ կը նայի)
ձայն չեւաւ, (Լուսիալին դրանք առջեւ կ'երքալ) ա՛հ,
հի՛ւ, հի՛ւ:

ՅԱԿ. — Ա՛հ, հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ,

ԿԱՐ. — (Վախնալով) Ա՛յ, ա՛յ, ա՛յ:

ՅԱԿ. — (Կը խնդրայ) Հա՛, հա՛, հա՛:

ԿԱՐ. — Վա՛յ, դո՞ւն Յակոր:

ՅԱԿ. — Այո՛ Կարապետ, ես եմ. (Մեկուսի) վա-
խէ՞ս խմածս ջուր կտրեցաւ:

ԿԱՐ. — Ի՞նչ ընկերու համար մտեր էիր հոն:

ՅԱԿ. — Լալու համար, (Մեկուսի) արդեօք տե-
սա՞ւ կ'ըսես:

ԿԱՐ. — Ո՞հ, այո՛, այո՛, ես ալ լալու համար
հոն պիտի մտնէի:

ՅԱԿ. — (Վայ թշուառական, կ'երեւայ թէ գործը
գիտէ.) Է՛հ ի՞նչ ընկենք Կարապետ, ա՛լ մեզի մխիթա-
րութիւն չկայ, եկուր քիչ մը գուրս ելլանք: (Գինի
մը կը տնկէ)

ԿԱՐ. — Զէ, չէ, կ'ուզես նէ գուն եւ, առանձին
միալ կ'ուզեմ: (Օղի մը կը տնկէ):

ՅԱԿ. (Մեկուսի) — Ասիկա հոս ձգելը գործիս
չի գար:

ԿԱՐ. (Նոյնպէս) — Կերպով մը ասիկա ճամբե-
լու է:

ՅԱԿ. — Է՛ Կարապետ, ասանկ հէ՞ (կուլալ):

ԿԱՐ. (Կուլալ) — Ասանկ հէ՞, (Մեկուսի) Աղէկ
ա՛, սենեակին մէջ ի՞նչ բան ունէր:

ՅԱԿ. (Մեկուսի) — Ան չէ եա, սուոր առանձին
սենեակ մտնել ուզելը ի՞նչ մտքով էր:

ԿԱՐ. — Լոէ՛, Յակոր, ա՛լ մխիթարուէ, լալէ՞ն

օգուտ չելլեր... մեղք ենք, գէւ կ'ըլլայ (Երբալու
միսէ չունի):

ՅԱԿ. — Եղբայր, աս մխիթարուելի՞ք բան է,
աշխարհիս երեսը որը, անտէրուն չմնացինք. (մեկուսի)
կ'երեւի թէ մինչեւ իրկուն հոս է:

ԿԱՐ. — Արդեօք կրնամ՝ հարցնել թէ ի՞նչո՞ւ
սենեակին մէջ մտեր էիր...

ՅԱԿ. — Հա... բան... լալու համար, չըսի՞ մի
եա:

ԿԱՐ. — Այո՛ բայց կրնայիր հոս ալ լալ:

ՅԱԿ. — Սակայն... վասն զի, մօրս սնտուկը
կարօտցեր էի, շատոն ալ անոր համար էր:

ԿԱՐ. — Սնտո՞ւկը... հա՛, հա՛, հա՛, սնտուկը,
հէ՞:

ՅԱԿ. — Է՛հ, այո՛... սնտուկը:

ԿԱՐ. — Է՛, ի՞նչպէս, կարօտդ առի՞ր:

ՅԱԿ. — Սա կայ որ... ճշմարիտ կ'ըսեմ, բան...

ԿԵ... :

ԿԱՐ. — Լոէ՛, ես ալ ընկեր եմ:

ՅԱԿ. — Ի՞նչ բանի:

ԿԱՐ. — Մէջի ոսկիի տոպրակին:

ՅԱԿ. — Իրա՞ւ կ'ըսես, մէջը տոպրակ կայ հէ,

ըսել է որ ինէ տառջ մէ, մը եկեր վնասուելեր ես:

ԿԱՐ. — Զէ, բայց աղէկ գիտեմ որ կայ. լուսա-
հոդին թէպէտեւ մեզի ստակ տուած ատենը տանս
կարապիները կը ծախեմ կոր կ'ըսեր, սակայն իրաւ
ըլլալու չէ. իր կծծիութենէն կը գուշակեմ որ 1 տոպ-
րակ ոսկի և ուրիշ զանազան ծանրագին բաներ պա-
հած է այդ սնտուկին մէջ:

ՅԱԿ. — Անանկ է նէ՝ ընկեր ենք:

ԿԱՐ. — Արծաթեղէնները քեզի, ոսկին ինծի:

ՅԱԿ. — Զէ, ոսկին ինծի, արծաթեղէնները քեզի:

ԿԱՐ. — Զըլլար:

ՅԱԿ. — Անանկ է նէ՝ ընկեր չէ՞մ ըլլալ:

ԿԱՐ. — Բայց այն ժամանակ ժառանգը նի՞ւթա-
նելով կը պարտաւորուինք նի՞ւ մէկը առնել:

Հ 57/44

ՅԱԿ. — Է՞ն, եթէ արծաթեղինները տոպրակ մը
ոսկիին հաւասար են, կ'ընդունիմ:

ԿԱՐ. — Օ՞ն ուրեմն, երթանք:

ՅԱԿ. — Բայց եթէ միւսները վրայ գան:

ԿԱՐ. — Անհոգ եղիր, ես կարկտան մը կը փակց-
նեմ:

ՅԱԿ. — Կեցցե՞ս... ուրեմն չուշանանք:

(Յակոբ գիմին, Կարապետ ալ օդին տնկելով կ'երգեն)

Վարպետ մարդիկ միշտ կը տանին
Երբ խորհուրդ մը յլանան,
Բայց պէտք չէ որ իրենց գաղտնին
Ուրիշ մեկուն ալ բանան:

Կեցցե՞ն գիմին, օդին եւ գիմեպան, որ մեր միտքը կը սրեն,
Կեցցե՞ն ապրին ասանկ մայրեր, որ մեզ ժառանգ են ձգեր:

(Մեկնին)

ՏԵՍԻԼ. Թ.

ՄԱՆՈՒԵԼ ԵՒ ՊԵՏՐՈՍ

ՄԱՆ. — Պետրո՞ս, վարը աղէկ նայեցա՞ր:

ՊԵՏ. — Նայեցայ, մարդ չկայ...:

ՄԱՆ. — Լուսիան քնացած ըլլալու է. կամաց
քալէ որ չարթննայ...

ՊԵՏ. — Մէկ մըն ալ սնտուկին սենեակը նայի՞նք:

ՄԱՆ. — Մի աճապարեր, եթէ հոն ըլլան՝ ի՞նչ
մտքով սենեակը մանելնիս կը հասկցուի:

ՊԵՏ. — Հօնք թէ հոն չեն, ի՞նչ պիտի ընենք:

ՄԱՆ. — Հնելիքնիո սա պիտի ըլլայ որ սնտու-
կին մէջէն մեր երկուքին համար քիչ մը բան կը
վերցնենք, մնացածէն ալ մէյ մէկ մաս առնելով
դուրսը որած պարտքերնիս կը մաքրենք:

ՊԵՏ. — Աղէկ բոիր, բայց եթէ հոն ըլլան...:

ՄԱՆ. — Է՞ն, այս ատեն սուտ մը շինելով զա-
նոնք կը ճամբենք և գործերնուու կը նայինք:

ՊԵՏ. — Խելքիդ պտուկը սիրեմ, ըսածդ աղէկ է:

ՄԱՆ. — Հիմա ետեւէս եկուր:

ՊԵՏ. — Ընկեր ենք, հա՛:

ՄԱՆ. — Այո՛, այո՛, կէսուակէս. բայց կամաց
քալէ (դոնին ներս կը նալի), վա՛յ, աս ի՞նչ է. արդ-
եօք աչքերս սիա՞լ կը տեսնեն կոր, Պետրոս, եկո՛ւր
դուն ալ նայէ. աս երկու մարդիկը Յակոբն ու Կա-
րապետը չե՞ն:

ՊԵՏ. — Իրա՞ւ կ'ըսես, նայիմ. (Բանալիին ծա-
կեն նայելով) անոնք են, սնտուկը բանալու կ'աշխա-
խատին կոր. վա՛յ թշուառական գողեր վա՛յ. անոնք
մենէ կանուի արթնցեր են:

ՄԱՆ. — Հիմա ի՞նչ պիտի ընենք, կեցիր, հա՛
միտքս բան մը եկաւ, շո՛ւտ, պուա՛, կանչուռաէ,
զրացինե՞ր օգնութեան հասէք, գող կայ:

ՊԵՏ. — Գող կայ, կրա՛կ կայ, զրացինե՞ր, օգ-
նութեան հասէք:

ՏԵՍԻԼ. Թ.

ՆՈՅՆԻ, ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ

ՅԱԿ. — Ի՞նչ կայ, ի՞նչ կայ:

ԿԱՐ. — Ի՞նչո՞ւ կը պուաք:

ՄԱՆ. — Վայ, դո՞ւք էք եղեր:

ՊԵՏ. — Գող կարծեցինք ձեզ:

ԿԱՐ. — Զէ, զող չենք. մենք ենք:

ՅԱԿ. (Յաձկն, Կարապետին) — Կարապետ, բանս
բուսաւ. կարկտանը փակցո՞ւր, պիտի յայտնուի:

ԿԱՐ. — Բայց չէ՞իք զիտեր որ մենք հոս ենք:

ՄԱՆ. — Ա՞չ չէ, ի՞նչ զիտնանք:

ՊԵՏ. (Մանուկիլին) — Սըկէ ճամբելուն մէկ ճարը:

ՄԱՆ. (Յաձկն Պետրոսին) — Համբերէ՛, (բարձր)
բայց ի՞նչ կ'ընէիք այդ սենեակին մէջ:

ԿԱՐ. — Բան, լալու համար մտանք, կոկիծնուու՝

ուր երթալնիս չէինք գիտեր կոր, խեղճ լուսահոգին
միտքերնիս ինկաւ, ա՛հ, հիւ։
ՊԵՏ. (Մեկուսի) — Վա՛յ ստախօսներ, վա՛յ։
ՅԱԿ. (Մեկուսի) — Վա՛յ սատանորդի վայ, աս
կարկառն գէւ չզնաց։
ՄԱՆ. — Ս սկայն, սնտուկին սենեակը ի՞նչ բան
ունէիք։
ԿՈՐ. (Մեկուսի) — Վա՛յ, տեսեր են, (բարձր)
Ա՛հ, մի՛ հորցներ, Մանուել, ան մի՛ հարցներ։
ՅԱԿ. — Ան կողմը գոցէ։
ՊԵՏ. — Սա սնտուկին քովիկը . . .
ԿՈՐ. — Մի՛ հորցներ, լոէ։
ՄԱՆ. — Բայց ի՞նչպէս երկուքնիդ ալ ծունկ չու-
քած ձեռքերնիդ սնտուկին վրայ դրած . . .
ԿՈՐ. — Յայտնի բան է, կ'աղօթէինք կոր . . .
ՄԱՆ. — Բայց սնտուկը բանալ կ'աշխատէիք կոր . . .
ՅԱԿ. — Ան կողմն ալ գոցէ։
ՊԵՏ. — Ի՞նչ ըսել է ան կողմը գոցէ, առ կողմը
գոցէ։
ՄԱՆ. (Կամաց, Պետրոսին) — Լոէ՛, գործը պիտի
աւրես, (բարձր) կը հաւատամ, Կարապետ, բայց եկած
եմ քեզի բարի լուր մը տալու։
ԿՈՐ. — Ի՞նչ լուր։
ՄԱՆ. — Նշանը զիս տեսնելով ապսպից որ
այս ի՞նչ զինետունը իրեն սպասէք. շահաւոր առուս-
տուրի մը քեզ ընկեր պիտի ընէ, Յակոբը գործով մը
ափարակ պիտի զրկէ, ես այնչափ աղաչեցի որ այս
գործին իս ալ ընկեր ընէ, «ըլլար». ըստու մինակ
երկուքնիդ իրեն շատ ծառայութիւններ ըլլած ըլլա-
նուդ՝ ձեզ վարձատրել կ'ուզէ։
ԿՈՐ. — (Մեկուսի) — Վա՛յ խարեբայ, մեզ ճամ-
բել կ'ուզէ։
ՅԱԿ. — (Կամաց մը Կարապետին) — Ի՞նչ կ'ըսես
Կարապետ, ուշանալու չդար, վերջը ասանկ բախտ
մը ձեռքէ կը փախթնենք։
ԿՈՐ. — Ծօ՛ ապու, միտքերնին մեզ ճամբու-
գնել, սնտուկը թալլել է։

ՅԱԿ. — Ի՞նչ կ'ըսես, անանկ է նէ չենք երթար։
(Այս միջոցին Մանուել եւ Պետրոս խնդալով կը խօսին)
ԿՈՐ. — Հնդհակառակը, երթալ ձեւացնելով՝ վա-
րը պահուըտինք, նայինք ի՞նչ պիտի ընեն։
ՅԱԿ. — Աղէկ ըսիր։
ԿՈՐ. — Է՛հ Մանուել, մենք կ'երթանք կոր,
գործերնիս յաջողի նէ՝ ձեզ ալ չենք մոռնար։
ՄԱՆ. — Երթաք բարով. (Լալով) ա՛հ, խեղճ
լուսահոգի. (իրարու կը փարքուին) ա՛հ, հիւ, հիւ,
(մեկուսի) կ'երթան կոր, վա՛յ ապուշներ վա՛յ։
ՊԵՏ. — Գացէք, գացէք, մի՛ ուշանաք։ (Կարա-
պետ եւ Յակոբ կը մեկնին խորեն) :

Տ Ե Ս Ի Լ ԺԱ.

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՄԱՆՈՒԵԼ

ՄԱՆ. — Է՛հ, Պետրոս, տունը մեզի մնաց, հիմա
ընելիքնիս մտածենք. սնտուկէն ի՞նչ որ ելլայ՝ կէսը
քեզի, կէսը ինծի։
ՊԵՏ. — Ո՞վ գիտէ մէջը ի՞նչ ծանր բաներ կան։
ՄԱՆ. — Մի՛ հարցներ, ծրարներով հնդհական
շալե՞ր մի կ'ըսես, ոսկի աշամանակնե՞ր, ոսկեհուռ
շրջազգիստնե՞ր, աղամանզակուռ մատանինե՞ր, ներ,
ներ, ներ, ալ ի՞նչ բաներ, որոնց մէկ կտորը
բաւական է մեզ ամբողջ տարի մը ապրեցնելու։
ՊԵՏ. — Աճապարենք, չելլան նորէն վրայ հաս-
նին։
ՄԱՆ. — Սա պատուհանէն նայէ, գացի՞ն մի։
ՊԵՏ. — (Նայելով) — Օհօ՛, գացեր, թոեր են.
Խեղճ ապուշներ, ի՞նչպէս ալ հաւատացին։
ՄԱՆ. — Ալ կընանք հանգիստ սրտով սենեակը
մտնել. սնտուկին բանալին քո՞վդ է։
ՊԵՏ. — Զէ, Լուսիային քովի է. արթնցնե՞մ։
ՄԱՆ. — Ի՞նչ կ'ըսես, ետքը անոր ալ բաժին մը
հանելու է։

ՊԵՏ. — Հապա ի՞նչ ընենք:
 ՄԱՆ. — Կը կոտրենք:
 ՊԵՏ. — Է՛, աղմուկէն լուսիա արթննայ նէ...:
 ՄԱՆ. — Այն ատեն ուղենք չուզենք, մաս մըն
 ալ իրեն կը հանենք: Քալէ՛ քալէ՛ (Նայելով), ա՛լ վա-
 խու բան չկայ. (Սնուվիին սենեակը կը մտնեն):

Տ Ե Ս Ի Լ ԺԲ.

ԿԱՐԱՊԵՏ, ՅԱԿՈԲ, (կամաց բալելով)

ԿԱՐ. — Կամաց քալէ:
 ՅԱԿ. — Կարծեմ, թշուառականները սնտուկին
 սենեակը մտեր են:
 ԿԱՐ. — Մեկի պէս անոնք ալ սնտուկին վրայ
 լալու գացեր են:
 ՅԱԿ. — Հիմա ի՞նչ պիտի ընենք:
 ԿԱՐ. — Ինչ որ անոնք մնզի ըրին:
 ՅԱԿ. — Ետքէ:
 ԿԱՐ. — Անոնք ալ ընկեր պիտի ընենք:
 ՅԱԿ. — Է՛ս, ընկեր ըլլան նէ՝ անդին ո՞վ կը
 մընայ:
 ԿԱՐ. — Լուսիան մոոցա՞ր. գոնէ անոր ինկած
 բաժինը չորսի կը բաժնենք:
 ՅԱԿ. — Բայց աճապարենք, նայէ՛, սնտուկը
 բանալ կ'աշխատին կոր:
 ԿԱՐ. — Ո՛, այդչափ դիւրին չէ բանալը, մենք
 այնչափ աշխատեցանք, չկրցինք բանալ:
 ՅԱԿ. — Աղէկ, բայց կոտրեն ու մէջէն անդին
 մատնի մը առնեն նէ՝ անոնց հերիք է:
 ԿԱՐ. — Անանկ է նէ պոռչըտուքը կոխենք. է՛ն,
 է՛ն, ո՞վ է ան, ո՞վ է, դո՞ւրս:
 ՅԱԿ. — Դուրս ելէք, գողեր աւազակներ, անձ-
 նատուր եղէք:

Տ Ե Ս Ի Լ ԺԴ.

ՆՈՅՆՔ, ՄԱՆՈՒԵԼ ԵՒ ՊԵՏՐՈՍ (Լալով կորգան)

ՄԱՆ. — Ա՛ս, հիւ, հիւ,
 ՊԵՏ. — Ա՛ս, հիւ, հիւ:
 ՅԱԿ. — Ան կողմը գոցէ՛ հէ՞...:
 ՄԱՆ. — Թողութիւն, Կարապետ, թողութիւն:
 ՊԵՏ. — Աստուած թողութիւն շնորհեսցէ:
 ՅԱԿ. — Շնորհեսցէ շնորհեսցէ, բայց սնտուկին
 կէսն ալ մնզի պարգևեսցէ:
 ՄԱՆ. — Սնտուկը:
 ՊԵՏ. — Սնտուկը
 ԿԱՐ. — Հա՛ սնտուկը, ոտք ելէք, ընկերաբար
 մէջերնիս բաժնենք, մարզու բան չըսենք:
 ՅԱԿ. — Ուրեմն մտնենք սենեակը և բերենք:
 (Երգ)

Օ՛՛ անդր մտնենք,
 Սնուվինիս բերենք, ।
 Ժառանգնիս բաժնենք,
 Բերանենիս սրբենք:
 Բայց կամաց ընենք,
 Որ չելլանի կոտրենք,
 Ու կուսիան արբեցնենք:

Տ Ե Ս Ի Լ ԺԴ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՊՈՒԿԱՍ (Լալով կը մտնէ)

ՂՈՒԿ. — Ա՛ս, հիւ, հիւ:
 ԱՄԵՆՔԸ. — Աս ո՞վ է:
 ՂՈՒԿ. — Խեղձ ազգականներս, իրաւ է որ ա-
 մենքս ալ միմիթարութեան կարօտ ենք: Աստուած իր
 հոգուն հանդիսաւ պարգևեսցէ:
 ԱՄԵՆՔԸ. — Ազգական մը. աս ուսկի՞ց ելաւ:

ՂՈՒԿ. — Իրաւ որ այս աշխարհս ունայնութիւն
է, այսինքն մարդիկ մեռնելու համար կը ծնին, բայց
միսիթարուելու ենք, մտածելով թէ մեր նախնիքը
եթէ չմեռնէին, մենք երբեք չպիտի ծնէինք:

ԱՄԵՆՔԸ. — Այո՛ պարոն, այո՛, բայց ո՞վ էք դուք:

ՂՈՒԿ. — Լուսահոգին շատ աղէկ կը ճանչնար
զիս, եթէ մեռած չըլլար:

ՅԱԿ. — Բարեկա՞մ մըն ես,

ԿԱՐ. — Դրացի՞ մըն ես,

ՄԱՆ. — Պահանջատէ՞ր մըն ես:

ՊԵՏ. — Պարտատէ՞ր մըն ես:

ՂՈՒԿ. — Աւա՛զ, ձեր լածներուն և ոչ մէկն եմ:

ԱՄԵՆՔԸ. — Ո՞վ ես ուրեմն:

ՂՈՒԿ. — Ո՞հ, թողէք զիս որ քիչ մը լուսահոգիին
յիշատակը ողբաժ, ի՞նչ պարեկշտ և առաքինի կին յըն
էր, շատ բարեսիրտ, աշխատասէր, խոնարհ, խնայող,
ուստի այօչափ բարեմասնութիւններով օժտեալ կին
մը հարկաւ ժառանգ ալ պիտի ունենայ:

ԱՄԵՆՔԸ. (Մեկուսի) — Ժառանգ:

ՂՈՒԿ. — Իմ ծնունդս գաղտնիք մըն է, որ լու-
սահողիէն և իմ գախճանեալ հօրմէս զատ ուրիշ մէկը
չի գիտեր, և շայրս իր մահուան անկողնոյն քով զիս
կանչել տալով երդում ընել տուալ ինձ որ մօրս կու-
սական գաղտնիքը մէկու մը չյայտնեմ. ես անոր խօսքը
ըսնէցի, մինչեւ վերջն ալ պիտի պահեմ ու հետո գե-
րեզման պիտի տանիմ:

ՊԵՏ. — (Կամաց՝ Կարապետին) — Կարապե՛տ,
վախնամ ազգական պիտի ելլենք, ես այս պատճու-
թենէն կը վախնամ կոր:

ՂՈՒԿ. — Ուստի կ'ալաչիմ, իմ ո՞վ ըլլալս հարցը-
նելու հարկ չկայ. սա միայն կ'ըսնմ որ ես ալ այդ
ժառանգին ժառանգորդներէն մէկն եմ:

ԱՄԵՆՔԸ. — Ժառանգորդը՝ ը՛ ը՛ ը՛.

ԿԱՐ. — Դուն ասոր ի՞նչ կ'ըսես, Յակոր:

ՅԱԿ. — Ի՞նչ պիտի ըսեմ, սնտուկը կէսուակէս

ըրած ատեննիս վախնամ 6 ի պիտի բաժնուի:

ՂՈՒԿ. — Սակայն ի՞նչ օգուտ ինծի ժառանգը,
թո՞ղ լուսահոգին ողջ ըլլար, ասոր հետ մէկտեղ ժա-
ռանգական իրաւունքս սրբազան պարտք մը սեպելով,
ոտնակոխ ընել չեմ ուզեր:

ՅԱԿ. — Յայց քու ո՞վ ըլլալը չգիտցած,
ի՞նչպէս պիտի համոզուինք որ սնտուկէն բաժին ու-
նիս:

ԱՄԵՆՔԸ. — Այո՛, այո՛, պէտք է որ հաստատես:

ՂՈՒԿ. — Շատ աղէկ, կ'ուղէ՞ք որ ճանչցնեմ,
մտիկ ըրէք, թէ՛ գաղտնիքը երեար չհանելու և թէ
ձեզի պէս իմ ալ ժառանգորդ մը ըլլալս ապացուցա-
նելու համար մութ պիտի խօսիմ:

ՅԱԿ. — (Կամաց) Պետրո՛ս, ասոր մութը լուսը
չմնաց. սա մեր եղբայրն է, ես ան գիտեմ:

ԱՄԵՆՔԸ. — Հսէ նայինք:

ՂՈՒԿ. — Ես ձեր լուսահոգի մեծ հօրը կամ հա-
ւուն եղբօրը աղուն քրոջը փեսին թուանը կնքահօրը
պղտիկ եղբօր աղջկան մեծ տղան եմ. ուստի կրնաք
հասկնալ որ ես ալ իրաւունք ունիմ լուսահոգիին
սնտուկէն:

ՄԱՆ. — Եյ չըսե՞ս, սնտուկը բոլորովին քեզի
ինկաւ գնաց:

ՊԵՏ. — Հա՛, հա՛, պարոն ժառանգորդ, Կարճ
խելքովս ըսած պորտերդ հաշուեցի, $6\frac{1}{2}$ պորտէն ըլ-
լալովդ՝ սնտուկէն մեզի մաս մը չի մնար կոր:

ՅԱԿ. — Դուրս ե՛լ նայինք, պարոն $6\frac{1}{2}$, $7\frac{1}{2}$,
8ուկէս պորտ, $ա'ն$ պիտան, դո՛ւրս:

ԿԱՐ. — Կոնակդ տեսնեմ, պարոն մօտիկ ազգա-
կան, այս տարի էլերուն խոտ փաելու տարի չէ:

ՂՈՒԿ. — Ինծի՞ այս ընդունելութիւնը, ինծի՞:

ՄԱՆ. — Եյ հա՛, քեզի, խելքովդ եկար մեզի
հետ խաղա՞լ կ'ուզես կոր:

ՊԵՏ. — Մենք իրարմէ գողնալ կը նայինք կոր,
սա ալ մենէ գողնալու ելեր է:

ՂՈՒԿ. — Սակայն գիտցէք, պարոններ, որ գաղ-
նիքս երեւան հանելով և բոլոր ժառանգութիւնը իմա-
ըլլալուն վկաներ դանելով ձեզ....

ՅԱԿ. — Ինծի նայէ, պարոն 6 ու կէս պորտ,
մօտիկ ազգական, դուն մեղ դատի հրաւիրես նէ՝
մենք ալ քեզի փատի կը հրաւիրենք:

ԱՄԵՆՔԻ. — Ծեծ չկերած՝ երթաս բարով:

ՂՈՒԿ. — Լաւ ուրեմն, կ'երթամ, բայց վախցէք
իմ բարկութենէս, պիտի երթամ վկաներ դանեմ և
այդ անտուկը ձեզի չպիտի թողում: (Կ'երբայ):

ՅԱԿ. — Վայ թշուառական վայ, քիչ մըն ալ
ոտք չկոխեմ նէ՝ անտուկը պիտի առնէ երթայ:

ՊԵՏ. — Բայց պէտք է այս բանիս վրայ աղէկ
մը խորհրդակցինք, գուցէ ըսածին պէս է:

ՄԱՆ. — Զգէ՛, վախկոտ դուն ալ, ան մինչեւ որ
գայ՝ մենք չորս ձեռք՝ տասը սնառուկ կը պարպենք:

ԿԱՐ. — Մանուէլը իրաւունք ունի, անտուկը
անոր կը ձգենք ու կ'ըսենք թէ մէջէն բան մը չելաւ:

ՅԱԿ. — Կեցցե՛ս, անանկ է նէ արտորանք, սըն-
տուկը բերենք ու լուս աշքով սըտեղ բաժնենք, շարը
մէջէն վերնայ:

ԱՄԵՆՔԻ. — Երթանք, չարը մէջէն վերնայ:
(Սընտուկին սենեակը կը մտնեն):

ՏԵՍԻԼ ԺԵ.

ԼՈՒՄԻԱ

ՂՈՒԿ. — Ելլբայրներս իրարանցումի մը մէջ են,
չգիտեմ թէ ի՞նչ է պատճառը. արդեօք գեղադորձին
ներսը պահութած ըլլալէն տեղեա՞կ են. ի՞նչ պիտի
ընէ այն խեղճը, եթէ ձեռքերնին իյնայ. բարեսիրտ
աղայ մըն էր, և այս', կ'երենար թէ բարի կամեցո-
ղութիւն մը ունէր իմմասիս, միշտիր կը սի... սի...
կարուկ խօսքերէն հասկնալու էի թէ կը «կը սիրեմ
քեզ» ըսել կ'ուզէր: Բայց ինձ նման որբ աղջիկ մը,
աղքատ մը ո՞վ կը սիրէ, ինքը հարուստ է՝ զիս կ'ու-

զէ. ա՛հ, խարերայ մը չէր ան. ինչո՞ւ քեզ կը սիրեմ
ըսելով զիս պիտի խարէր, Աստուած իմ, կարծես թէ
իր վրայ համակրութիւն մը կը զգամ. եղո՛ւկ, հիմա
կը զղամ թէ ինչո՞ւ իր միտքը հասկնալ չուզեցի,
զիս ո՞վ պիտի պահէ, աւասիկ եղբայրներ. ո՞հ, նայիմ
թէ ի՞նչ կ'ընեն խեղճ գեղագործիս. (սենեակին կը մո-
տենայ) չերեւար. եղբայրներս սնառուկին քով շարուեր
կուլան. առիթ մը գտած ու փախած ըլլալու է:
Մայր իմ, ներէ քու աղջկանդ. եթէ քու ստուերդ
գոհ կ'ըլլայ զինքը սիրելով՝ կը սիրեմ զինքը...:
Երբոր վաղը գայ՝ կ'ընդունիմ իր առաջարկութիւնը,
բայց մինչեւ վաղը ի՞նչպէս պիտի լուսցնեմ: (Տիրու-
թեամբ իր սենեակը կը մտնէ):

ՏԵՍԻԼ ԺԵ.

ՄԱՆՈՒԷԼ, ՊԵՏՐՈՍ, ՅԱԿՈԲ, ԿԱՐԱՊԵՏ,

(Սընտուկին չորս ծայրեն բոնած, երգելով կուգան.)

Խեղճուկ պառաւիկ, ինչո՞ւ եռ որդիկ
Յուսահաւ բողիր, առիր հալեցիր,

Ե՛լ, Ե՛լ, ողջնցիր, մեզ գործի մը դիր,
Անօրի չորցանի, ու ցուրտեն փացանի:

ՊԵՏ. — Եղբայրներ, ծունը դնենք լուսահողիին
սնառուկին առջեւ, և մէյթէկ ողորմիս կարգանք:

ՄԱՆ. — Այո՛, կարդանք, պարտքերնիս է:

ԿԱՐ. — Ո՞վ խեղճ պառաւ մայրիկս, զուն որ
այս աշխարհիս մէջ ինծի օղիի ախ քաշել չի տուիր,
Աստուած ալ քեզի անդէնը ախ քաշել չիտայ:

ՅԱԿ. — Ո՞վ իմ լուսահոգի մայրիկս, զուն որ
այս աշխարհին մէջ ինծի գինիի նեղութիւն քաշել
չի տուիր, անդէնն ալ «ի նեղութեան իմում ես առ
տէր կարգացի» քեզի օգնական պահապան ըլլայ:

ՊԵՏ. — Ա՛խ, մայրիկ, ես ինչ ըսեմ նէ տեղն է,
ինչպէս որ այս աշխարհին մէջ զիս զրիր ու վեր-

ցուցիր, յաւիտենականութեան մէջ ալ քեզ դնող վերցնողն ալ անպակաս եղիցի:

ՄԱՆ. — ԵՇ, խանդակաթ մայրիկս, ինչպէս որ դուն զիս այս աշխարհիս մէջ քու ստեամբդ ջամբեցիր և գիեցուցիր՝ անդէնն ալ քեզի սէր ու կաթ տուողն անպակաս եղիցի:

ԱՄԵՆՔԸ. — Եղիցի և եղիցի: (Բարձրաձայն կուլան):

ԿԱՐ. — ԵՇ բաւական լացինք, պարտքերնիս կատարեցինք, քիչ մըն ալ սա մնտուկին նայինք:

ՄԱՆ. — Հաշիւնիս ո՞վ պիտի տեսնայ:

ԱՄԵՆՔԸ. — Յակոբը, Յակոբը:

ՅԱԿ. — Ես թուղթ գրիչ ունիմ, բայց մելան չունիմ:

ՄԱՆ. — Մատիտով գրէ: Հիմա ինչ որ ելայ, մէջերնիս սա կերպով կը բաժնենք. արծաթեղէնները Յակոբին, ոսկեղէնները ինծի, մետաքսեղէնները Պետրոսին, աղամանդակուռներն ալ՝ Կարապետին:

ՅԱԿ. — Զէ, ես աղամանդակուռները կ'ուղեմ:

ԿԱՐ. — Ես արծաթեղէնները չեմ ընդունիր:

ՊԵՏ. — Ես ալ քուրջերը չեմ առներ:

ԱՄԵՆՔԸ. (Խառն ձայնով) — Ես չեմ ուզեր. ան պղտիկ է. դուն շատ յոդնեցար չէ, ես աս կուզեմ չըլլար. չպիտի ըլլայ:

S E U H L. ԺԷ.

ՆՈՅՆՔ, ՏԻՏՈՍ, ՆՇԱՆ, ԴՈՒԿԱՍ

ՆՇԱՆ. — ԷՇ, ԷՇ, ատ ի՞նչ է նայինք, կեցէ՞ք, ի՞նչ կ'ընէ՞ք:

ԴՈՒԿ. — Ի՞նչ կ'ընէ՞ք կոր:

ՏԻՏ. — Կարծեցինք թէ սնտուկը առանձին կը մարսէ՞ք:

ԱՄԵՆՔԸ. — Վա՛յ, (Եւ սնտուկին կը հեռանան):

ՊԵՏ. — (Կարապետին) Կարապետ, լուսնակն առջի իրիկուընէ ելաւ, սնտուկը ձեռքէ գնա՞ց:

ՆՇԱՆ. — Դուք Աստուծմէ չէ՞ք վախնար, ո՞ր երկրին մէջ տեսաք որ ժառանգութիւն մը առանց դրացիներու վկայութեանը ժառանգորդներուն բաժնուի:

ՏԻՏ. — Եթէ ժառանգապահ ատեանը ձեր այս գողութիւնը լսէ՝ ձեզ բանտարկել չի տա՞ր:

ՆՇԱՆ. (Լուկասը ցուցնելով), — Մանաւանդ որ ձեզի ժամանակակից դատախազ մըն ալ ունիք:

ՏԻՏ. — Որուն իրաւունքը ապացուցանելու համար եկած ենք:

ՆՇԱՆ. — Այո՛, այդ պարոնը բուն իսկ լուսանողին ժառանգորդն է:

ՏԻՏ. — Բաէք, քանի՞ կ'արժէ այս տունը:

ՆՇԱՆ. — Վեց մասի բաժնելով մէկը ձեզի կ'իշնայ:

ԶՈՐՍ ԵՂԲԱՐՔ. (Բարկուքեամբ) — Վեցին մէկը մի՛:

ՏԻՏ. — Այո՛, այդ օնտուկը որ բանալու կ'աշխատիք, միայն ձեր քրոջը լուսիային իրաւունքն է. քան զի մօրը սնտուկը աշխիկ զաւկին կ'իշնայ:

ՊԵՏ. — ԵՇ մէկի ի՞նչ կը մնայ:

ՆՇԱՆ. — Պարոնին 5 մաս տունը, լուսիային 1/5 մաս տուն և ամբողջ սնտուկը, իսկ ձեր ամէն մէկուն յատ կամ քիչ պարտք:

ԴՈՒԿ. — Ասոր մսելիք մը ունի՞ք:

ՅԱԿ. — Ինծի հարցնէք նէ՝ ես աս ժառանգէն ալ վազ անցայ, պարտքն ալ:

ՆՇԱՆ. (Կարապետին) — Դո՞ւք:

ԿԱՐ. — Ինծի տասնոց օդի մը տուէք՝ բոլոր ժառանգութիւնս ձեզի կը թողում:

ՄԱՆ. — Սակայն եղբայր յրացիներ, վերջապէս խելքս չհասաւ, սա մեր 6¹/₂ պորտի ժառանգը ուսւ. կ'ից բուասւ:

ՆՇԱՆ. — Ադ ուսկից բուսաւը ոչ ձեզի և ոչ մեզի կը վերաբերի, մեր խելքը չէ հասեր ատար, ո՛ւր մնաց ձերը:

ՂՈՒԿ. — Լուսիան ո՞ւր է, թող գայ իր սնառու-
կը առնէ, տունին սէնէտն ալ ինծի յանձնեցէք:

ՑՈՒԿ. — Սխալմունք մը չըլլայ, աղէկ գիտէ՞ք
որ այս մարդուն 4 բաժին կ'իյնայ:

ՆՇԱՆ. — Ատ ալ խօ՞սք է, քիչ մըն ալ խաթ-
րերնիս շիներ նէ՝ հինգն ալ անոր պիտի տայինք:

ՏԻԾ. — Մեզի հետ իսաղ չի խաղցուիր:

ՊԵՏ. — Ինծի՞նայեցէք, մեզի իսաղ չի խաղցը-
ւիր, թէ որ աս մարդը եղբայրնիս է՝ մեզի հետ կրնայ
մէկ բաժին ուտել. 4ը ուսկե՞ց պիտի ուտէ:

ԶՈՐՄ ԵՂԲԱՐՔ. — Ա՛ն վերի արտին ցորեն՞նն է:

ՆՇԱՆ. — Հասկցայ, գուք խօսք հասկցող մար-
դիկ չէք եղեր, բ'ցց ետքը պիտի զզջաք:

ՂՈՒԿ. — Աւասիկ այսափ, չըսին չըսէք, հիմա
կանչեցէք Լուսիան, սնտուկը աչքերնուս առջեւ իրեն
յանձնեցէք, վաղն ալ տունին դործը կ'երթանք կը
լմցնենք:

ԶՈՐՄ ԵՂԲԱՐՔ. — Մենք ալ ատանկ կ'ուզենք:

ՏԻԾ. — Լուսիա՛, Լուսիա՛, (Լուսիա կը մտէ)

ՂՈՒԿ. — Ի՞նչ կայ որդեօք, ի՞նչ կ'ուզէք, պա-
րոններ:

ՆՇԱՆ. — Մի վախնար, աղջիկս, մօտեցիր, մենք
քու ազէկութեանդ համար եկած ենք, այս սնտուկը
քու մօ՞րդ է:

ՂՈՒԿ. — Այո՛:

ՏԻԾ. Եթէ պարունակութիւնը ըսես, սնտուկին
աէրը գուն կ'ըլլաս:

ՂՈՒԿ. — Ա՛ն, բարի դրացիներս, չպիտէ՞ք դուք
մեր վիճակը, խեղճ մայրիկս ի՞նչ պիտի ձգէր ինծի:

ՏԻԾ. — Ինչ է նէ՝ ինչ որ կայ մէջը, քուկդ է:

ՂՈՒԿ. — Զոյգ մը գուլպայ և հին հովանոց մը:

ԵՂԲԱՐՔ. — Անանկ է նէ սնտուկը քուկդ է:

ՆՇԱՆ. — Բասծդ հաստատելու համար պէտք է
որ ամենքս ալ տեսնենք, բանլիքը որո՞ւն քովն է:

ԶՈՐՄ ԵՂԲԱՐՔ. — Մեր քովք չէ, մեր քովք չէ:

ՂՈՒԿ. — Իմ քովս ալ չէ:

ՊԵՏ. — Հապա ո՞ւր է:

ՂՈՒԿ. — Սնտուկին զրայ թողած էի:

ՑՈՒԿ. — Քանի որ հաւկիթին զեղնուցը երեւան
ելաւ, առէք բանլիքը իմ քովս է, բայց աւրուեր է,
չի բացուիր կոր:

ՆՇԱՆ. — Տուր նայիմ, (կ'առնէ) հիմա ամենք-
նիդ ալ մօտեցէք որ Լուսիայի ըսածին ականատես
ըլլանք: (Սնտուկը կը բանայ, Համբարձում հաշիւր
ձեռքը բնեած կ'երեւայ):

Տ Ե Ս Ի Լ Ժ Բ.

ՆՈՅՆՔ ԵԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ (Սնտուկին մէջ կանգնի)

ԱՄԵՆՔԸ. — Աս ի՞նչ է:

ՀԱՄ. — Դեղագործին հաշիւն է, չէ՞ք տեսներ
կոր, պարոններ, 270 զրուշ կ'ուզեմ (լուրիւն):

ՂՈՒԿ. — Ո՞վ ես դուն, ի՞նչ կուզես:

ՀԱՄ. — Լուսիային նշանածք, կը սիրեմ:

ՆՇԱՆ. — Ի՞նչ բան ունիս հոս:

ՀԱՄ. — Այս ստակը այսօր պիտի վճարուի:

ԱՄԵՆՔԸ. — Խենթ է, ինչ է:

ՀԱՄ. — Այո՛, խենթ եմ. խենթեցայ, պիտի
խենթենամ, խենթեցած եմ:

ՏԻԾ. — Որո՞ւ համար:

ՀԱՄ. — Լուսիային, իմ սիրուհիս, հոգիս, կեան-
քըս, գանձս, բոլորն ալ իրն է:

ԱՄԵՆՔԸ. — Ա՛ռ ժառանքը նօտէ վար:

ՂՈՒԿ. — Ներեցէք, պարոններ, սիալ տուն եմ
եկեր, սնտուկն ալ, տունն ալ ձեզի:

ՄԱՆ. — Հիմայ իրաւուքը նայիս նէ՝ աս ժա-
ռանքը քեզի կ'իյնա պարոն, 6 ու կէս պորտ:

ՂՈՒԿ. — Շնորհակալ եմ պարոն, ժառանդին
տէրը քոյրդ է, անանկ որոշեցինք:

ՆՇԱՆ և ՏԻՏ. — Լուսիա՛, ասոր ըսելիք մը ուս
նի՞ս. սնտուկէն ինչ որ ելլէր՝ քեզի պիտի տայինք,
ժառանգդ կընդունի՞ս:

ԼՈՒՄ. — Քանի որ իմ բախտս ուս է՝ կ'ընդունիմ»

ՀԱՄ. — Ա՛ն, սիրունիկո, ես ալ քուկին արեւոդ
կը մեռնիմ (Լուսիային կը փարի):

ՆՇԱՆ. — Բայց սնտուկին մէջ ինչո՞ւ մտեր էիր:

ՀԱՄ. — Եղբայրներուն ձեռքը չանցնելու համար,
սնտուկը մտայ, փախչելու ժամանակ չգտայ:

ՂՈՒԿ. — Սիրահարութիւն ընելու եկած էիր:

ՀԱՄ. — Ո՛չ, 270 զբուշ առնելիքս ուզելու:

ՆՇԱՆ. (Լուկասին) — Պարս՛ն, սնտուկէն ժա
ռանգի տեղ մարդ մը եւս, գուցէ տունէն ալ կին մը
ելլայ, կ'ընդունի՞ս:

ՂՈՒԿ. — Ծնորհակալ եմ, ես կնկան աչք չու-
նիմ, իմ փնտուած սատկ էր. ցածողեցաւ, ուստի մը-
նաք բարով:

ՆՇԱՆ և ՏԻՏ. (Լուկասին ձեռքը բրնելով՝ կա-
մաց) — Երթաս բարով, սակայն ինստացած երեք
սակիդ չի մոռնաւ:

ՂՈՒԿ. — Ե՛զբայր, ի՞նչ առի որ ի՞նչ տամ:

ԱՄԵՆՔԸ. — Բայց ուրիշ կերպութ գեղադոր-
ծը ըրաւ: (միաբերան կ'երգեն)

Մրադողնիս պարապը ելաւ,

Մինակ Լուսիան շանեցաւ,

Այնչափ սուտեր փունք զնաց,

Գլխարկն Համբարձում հագաւ:

Կեցցե՛ հարսը, կեցցե՛ փեսան, բող ալ զլուկս զլիսի տան,
Գոնք հարսնիքն ուտենք, խնդանն մենք ալ ասով զոհ ըլլանք

Ապիա՛, առ
ելլէր՝ քեզ:

m - 9

Ն Ա Բ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Արբայ Քօնսրանքեն բարգ. Ա. Օտեան (վեալ ամերիկեան եւ Թրանսական կեաննե) 60 դրուց

Աղջկան մը Յիշատակարանը գրեց Տօֆթ. Կ. Փատական (վեալ ազգային կեաննե) 30 դրուց

Խնդամոլիկ Աղջիկը գրեց Արփիար Արփիարեան (Պոլսահայ իրական կեաննե, բաղուած) 30 դրուց

Վեց ու Կէս Պորտի Ժառանգ Մնացած Սևուկը գրեց Գ. Ռուտունի (զաւես մէկ արար) 20 դրուց

Կեդրանատեղի Հ. ԿՈՇԿՈՐԵԱՆ Գրատուն

Բոլոր այն ընթերցանակները, Ակումբի Վարչութիւնները եւ գրավանառները ոռանի կ'ուզեն սոյն գրեթեն ունենալ, կրնան փոխարժեքը մեզ դրկել ապահովագրուած նամակի միջոցաւ եւ կ'ըստանան իրենց ուզած գրեթեր:

Կօշկարեան գրատունը կը յայրայրէ ամէն տեսակ Վիզավան, Թատերական, Դրական, Բանասեղծական եւ Գպրոցական գրեթե:

Փափամողներուն կը դրկէ իր գրացանկը Զ Բ Ի

Անփոփոխ հասցէ:

(Վ. Ա. Ի. Բ. Բ. 558 STAMBOUL Հ. ԿՈՇԿՈՐԵԱՆ «ԱՐԵՒ»

Կեցցէ
Դոնի Բն

[306]

A ii
57144

ԳԱԱ Եիմնարար Գիտ. Գրադ.



220057144